ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

# ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԸ

*Հունիսի 12-ին, Թբիլիսիի քաղաքապետարանի աջակցությամբ եւ Վրաստանում Հայաստանի դեսպանության նախաձեռնությամբ, Թբիլիսիի Լադո Ասաթիանի (նախկին Էնգելսի) 42 հասցեում տեղի ունեցավ աշխարհահռչակ գիտնական, ակադեմիկոս եւ անվանի աստղագետ, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի (1982թ.) Վիկտոր Համբարձումյանի հիշատակին նվիրված հուշատախտակի բացման արարողությունը:*



ունեցող ակադեմիկոսի հիշատակը հավերժացնող հուշատախտակի բացման հանդիսավոր արարողությունը:

Թբիլիսիի քաղաքապետարանի Մշակույթի եւ սոցիալական հարցերի ծառայության ղեկավար Մամուկա Քացարավան իր ելույթում կարեւորեց հուշատախտակի բացման փաստը Թբիլիսի քաղաքում՝ նշելով, որ հպարտ եւ ուրախ է, որ թբիլիսաբնակ հայազգի անվանի անձանց հիշատակին նվիրված հուշատախտակները տեղադրվում են Վրաստանի մայրաքաղաքում՝ միեւնույն ժամանակ հայտնելով, որ այդ գործընթացը կրելու է շարունակական բնույթ:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին Վրաստանում Հայաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Վահագն Աֆյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, թբիլիսաբնակ գրող, թարգմանիչ Գիվի Շահնազարը, վրաց մտավորականներ, հայ համայնքի մշակութային ու հասարակական գործիչներ:

Հուշատախտակի բացմանը ողջույնի խոսքում Վահագն Աֆյանը բարձր գնահատեց Թբիլիսիի քաղաքապետարանի պատասխանատու պաշտոնատար անձանց հետ Վրաստանում Հայաստանի դեսպանության համագործակցության շնորհիվ իրականություն դարձած, համաշխարհային աստղագիտության բնագավառում մեծ ներդրում

Վիկտոր Համբարձումյանը նախնական ուսումն ստացել է Թիֆլիսի 3-րդ, ապա՝ 4-րդ գիմնազիայում եւ 1924թ. մեկնել է Սանկտ Պետերբուրգ եւ ընդունվել տեղի համալսարան, որի շրջանավարտն էր նաեւ ծնունդով Հայաստանի Վարդենիսից հանրահայտ աստրոֆիզիկոսի հայրը, ի դեպ, մայրը քաղաք Ցխինվալիի հայ հոգեւորականի դուստր էր:

Շնորհակալական եւ դրվատանքի խոսքեր ուղղվեցին այն անհատներին, ովքեր իրենց ներդրումն են ունեցել Վիկտոր Համբարձումյանի հուշատախտակի ստեղծման եւ տեղադրման գործում, հատկապես թբիլիսցի բարերար, հայկական համաշխարհային կոնգրեսի գլխավոր խորհրդի անդամ Ռաֆիկ Աղաջանյանին:




## ԾԽԵԼԸ ՍՊԱՆՈՒՄ Է
## ԾԽԵԼԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ՄԱՇԿԻ ՎԱՂԱԺԱՄ ԾԵՐԱՑՄԱՆ

2014 թվականի մայիսի 26-ին մեկնարկել է Տեմպոյի «Դարձիր հաջողակ» ակցիան, որը կշարունակվի մինչեւ հունիսի 20-ը: Ակցիայի օրերը երկուշաբթին եւ ուրբաթն են, ժամը՝ 09.00-ից մինչեւ 21.00-ը: Որպեսզի ծխողը դառնա խաղարկվող չորս BMW-ներից մեկի տերը, կամ ստանա մեկ այլ նվեր, անհրաժեշտ է այցելել Օմեգայի խանութ:

Երեք տուփ Տեմպոյի գնման դեպքում, ծխողը ստանում է տոմսակ եւ, գաղտնագիր գոտում երեք միանման նվերի բացահայտման դեպքում, նա դառնում է վերոնշյալ նվերի տերը եւ անմիջապես վերցնում այն:

Եթե ծխողը շահում է ավտոմեքենա, ապա այցելելու է «Օմեգա մոտորս», Դավիթ Աղմաշենեբելի 10-րդ կմ, հեռախոս՝ 2-25-70-70:

Եթե ծխողը շահում է «Մորելիս ջելատո» վաուչեր, նա պետք է այցելի «Մորելիս ջելատո», Ս.Ցինցաձե N8, հեռախոս՝ +995322223244, իր հետ ունենալով անձնական վկայականը եւ «Մորելիս ջելատոյի» վաուչերը:

Օրվա ընթացքում նվերների թիվը հասնում է 70-ի: Նվերների սպառման դեպքում, կոնկրետ օրվա ակցիան համարվում է ավարտված, թեպետ դուք կարող եք ակցիայից ցանկացած հաջորդ խաղարկմանը երջանկանալ:

* Ակցիայի մասնակիցը չի կարող լինել 18 տարեկանից փոքր:
* Նվերները կարող են տեսականորեն տարբերվել լուսանկարում տրվածից:
* Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք կապվել (+99532) 2530099 թեժ գիծ՝ ժամը 09.00-ից մինչեւ 18.00-ը, ամեն օր, բացի կիրակի օրվանից, կամ այցելել Տեմպոյի www.tempo.ge կայքէջ:

**ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ**



# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15

# ადგილობრივი თვითმმართველობის არჩევნები

## 2014 წლის 15 ივნისი

### ამომრჩეველთა საყურადღებოდ! Ի ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ

კენჭისყრა იმართება 08.00 საათიდან 20.00 საათამდე Քվեարկությունն անց է կացվում ժամը 08.00-ից մինչև ժամը 20.00-ը:



კენჭისყრის შენობაში შესვლისას ნაკადის მომწესრიგებელ კომისიის წევრს წარუდგინეთ პირადობის მოწმობა (იძულებით გადაადგილებული პირის შემთხვევაში აგრეთვე დევნილის მოწმობა) ან პასპორტი და გაიარეთ მასთან მარკირების შემოწმების პროცედურა

Քվեարկության շենք մտնելիս՝ հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին ներկայացրե՛ք ինքնությունը հավաստող վկայական (հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի դեպքում՝ նաև տարհանվածի վկայական) կամ ,անձնագիր և նրա մոտ անցե՛ք նշմարման ընթացակարգ:

**თუ აღმოჩნდა, რომ გაქვთ მარკირება, არ მოგეცემათ კენჭისყრაში მონაწილეობის უფლება**
**ԵԹԵ ՊԱՐԶՎԻ, ՈՐ ԱՐԴԵՆ ՈՒՆԵՔ ՆՇՄԱՐՈՒՄ, ՁԵԶ ՉԻ ՏՐՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ**



მარკირების შემოწმების პროცედურის გავლის შემდეგ მიდით სარეგისტრაციო მაგიდასთან და რეგისტრატორს წარუდგინეთ პირადობის მოწმობა (იძულებით გადაადგილებული პირის შემთხვევაში აგრეთვე დევნილის მოწმობა) ან საქართველოს მოქალაქის პასპორტი

გაიკეთეთ მარკირება

Նշմարումը ստուգելու ընթացակարգն անցնելուց հետո, գնացե՛ք գրանցման սեղանի մոտ և գրանցումն իրականացնողին ներկայացրե՛ք ինքնությունը հավաստող վկայական (հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի դեպքում՝ նաև տարհանվածի վկայական) կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր:

Անցե՛ք նշմարում:

**მარკირებაზე უარის თქმის შემთხვევაში არ მოგეცემათ კენჭისყრაში მონაწილეობის უფლება**
**ՆՇՄԱՐՈՒՄԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ՁԵԶ ՉԻ ՏՐՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ**



ამომრჩეველთა სიაში თქვენი გვარის გასწვრივ გააკეთეთ ხელმოწერა

მიიღეთ რეგისტრატორისგან ბეჭდითა და ხელმოწერით დამოწმებული საარჩევნო ბიულეტენები

Ընտրողների ցուցակում ձեր ազգանվան երկայնքով ստորագրե՛ք:

Գրանցումն իրականացնողից ստացե՛ք կնիքով և ստորագրությամբ վավերացված քվեաթերթիկներ:



კენჭისყრის კაბინაში შემოხაზეთ თქვენთვის სასურველი ერთი საარჩევნო სუბიექტის რიგითი ნომერი (ყოველ საარჩევნო ბიულეტენში)

თუ დამოუკიდებლად არ შეგიძლიათ შეავსოთ საარჩევნო ბიულეტენი, უფლება გაქვთ, კენჭისყრის კაბინაში დასახმარებლად მიიწვიოთ ნებისმიერი პირი, გარდა საარჩევნო კომისიის წევრისა, კანდიდატისა, საარჩევნო სუბიექტის წარმომადგენლისა, დამკვირვებლისა

Քվեախցիկում շրջագծե՛ք Ձեզ համար ցանկալի ընտրական սուբյեկտի հերթական համարը (յուրաքանչյուր քվեաթերթիկում):

Եթե չեք կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, իրավունք ունեք քվեախցիկ Ձեզ օգնելու հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, դիտորդի:

**თუ გაგიფუჭდათ საარჩევნო ბიულეტენი, მიმართეთ საარჩევნო კომისიის თავმჯდომარეს, გადაეცით გაფუჭებული და მოითხოვეთ ახალი საარჩევნო ბიულეტენი**

**ԵԹԵ ՎՆԱՍԵԼ ԵՔ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ, ԴԻՄԵ՛Ք ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ, ՓՈԽԱՆՑԵ՛Ք ՎՆԱՍՎԱԾԸ ԵՎ ՊԱՀԱՆՋԵ՛Ք ՆՈՐ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ**



კენჭისყრის კაბინიდან გამოსვლის შემდეგ აიღეთ სპეციალური კონვერტი და დაკეცილი საარჩევნო ბიულეტენები მოათავსეთ მასში

სპეციალური კონვერტი მოათავსეთ საარჩევნო ყუთში

Քվեախցիկից դուրս գալուց հետո, վերցրե՛ք հատուկ ծրարը և ծալված ընտրական քվեաթերթիկները զետեղե՛ք նրա մեջ:

Հատուկ ծրարը գցե՛ք քվեատուփի մեջ:

**კენჭისყრაში მონაწილეობის შემდეგ, გთხოვთ, დატოვოთ საარჩევნო უბანი**
**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՑ ՀԵՏՈ, ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԴՈՒՐՍ ԳՆԱԼ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻՑ**

ცესკო
საქართველოს საარჩევნო ადმინისტრაცია

ცესკოს ცხელი ხაზი:
ԿԸՀ-Ի ԹԵԺ ԳԻԾԸ. 2510051

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՎՍՏՐԻԱ. ՍՏՈՐԱԳՐՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ



*Հունիսի 10-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այցով մեկնեց Ավստրիայի Հանրապետություն: Այցի շրջանակներում կայացավ Հայաստանի եւ Ավստրիայի նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Հայնց Ֆիշերի առանձնազրույցը, ապա՝ պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ ընդլայնված կազմով բանակցությունները, որոնց ավարտին ստորագրվեցին մի շարք ոլորտներում հայ-ավստրիական համագործակցության խորացմանն ուղղված փաստաթղթեր:*

Վիեննայում Հայաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ նաեւ Ավստրիայի ազգային խորհրդի նախագահ Բարբարա Պրամմերի, դաշնային վարչապետ Վերներ Ֆայմանի, Վիեննայի քաղաքապետ Միքայել Հոյփլի, Վիեննայի արքեպիսկոպոս, Ավստրիայի կաթոլիկ եկեղեցու առաջնորդ կարդինալ Քրիստոֆ Շոնբորնի հետ: Սերժ Սարգսյանն այցելեց Ավստրիայի դաշնային տնտեսական պալատ, որտեղ նախագահ Հայնց Ֆիշերի հետ մասնակցեց հայ-ավստրիական տնտեսական համաժողովի բացմանը, իսկ մինչ այդ հանդիպում ունեցավ պալատի նախագահ Քրիստոֆ Լայթլի հետ:

Հայաստանի նախագահը մի շարք հանդիպումներ անցկացրեց Վիեննայում տեղակայված ՄԱԿ-ի տարածաշրջանային կենտրոնակայանում:

Այցի շրջանակներում՝ նախագահ Սերժ Սարգսյանը նաեւ հարգանքի տուրք մատուցեց ավստրիացի գրող եւ հումանիստ Ֆրանց Վերֆելի հիշատակին՝ այցելելով եւ ծաղկեպսակ դնելով նրա հուշարձանին, Սբ. Հռիփսիմե Հայ Առաքելական եկեղեցում հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, ծաղիկներ դրեց եկեղեցու բակում գտնվող հուշահամալիրին: Սերժ Սարգսյանը եղավ նաեւ Վիեննայի Մխիթարյան միաբանությունում:

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Հայաստանի նախկին վարչապետ, երջանկահիշատակ Անդրանիկ Մարգարյանի ծննդյան օրվա կապակցությամբ, վարչապետ Հովիկ Աբրահամյանն այցելեց Կոմիտասի անվան պանթեոն: Վարչապետը եւ Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը ծաղիկներ դրեցին Անդրանիկ Մարգարյանի շիրիմին՝ հարգանքի տուրք մատուցելով պետական, քաղաքական գործչի հիշատակին:*

*Հայ Առաքելական եկեղեցու սպասավորների կողմից մատուցվել է հոգեհանգստյան կարգ:*

## ԱՆՆԱԽԱԴԵՊ ՔԱՅԼ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ



*Հունիսի 12-ին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Հայաստանի կառավարության հերթական նիստը:*

Կառավարությունը հավանություն է տվել «Շրջանառության հարկի մասին» եւ եւս վեց օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու օրենքների նախագծերի փաթեթին, որի ընդունմամբ հարկման առավել բարենպաստ պայմաններ կստեղծվեն առքուվաճառքի գործունեություն իրականացնող ՓՄՁ սուբյեկտների եւ ընտանիքի անդամների կողմից համատեղ իրականացվող ընտանեկան ձեռնարկատիրության համար:

Առաջարկվում է շրջանառության հարկի դրույքաչափը 3,5 տոկոսի փոխարեն սահմանել 1 տոկոս, ներդնել եւ 2-3 տարվա ընթացքում աստիճանաբար խստացնել ձեռքբերումները փաստաթղթով հիմնավորելու պարտադիր պահանջը խախտելու դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները, ընտանիքի անդամների կողմից համատեղ իրականացվող ձեռնարկատիրական գործունեության դեպքում ներդնել հարկման արտոնյալ համակարգ, սահմանել, որ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ կարող է համարվել ընտանիքի անդամների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը, որի իրացման հասույթը նախորդ կամ տվյալ տարվա ընթացքում չի գերազանցել 12 մլն դրամը եւ այլն:

## ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ՝ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

*Ստամբուլի հայկական Սահակյան-Նունյան վարժարանն արժանացել է ISO 9001 որակավորման հավաստագրի: Այս մասին տեղեկացնում է հայկական «Ակոս» պարբերականը: Թուրքիայի հայկական համայնքային կազմակերպություններից առաջին նման հավաստագիրն ստացել էր Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցը: Կրթական ոլորտում Սահակյան-Նունյան վարժարանն առաջինն է:*

*Դպրոցի տնօրեն Թալին Մաթոսօղլուն եւ գործադիր խորհրդի նախագահ Եսայի Դեմիրը պատմել են, որ հավաստագրին արժանացել են երեք տարվա ջանասեր աշխատանքներից հետո, որի արդյունքում Սահակյան-Նունյանի դասարանները համալրվել են լափթոփներով, համակարգիչներով, լուսարձակներով, էլեկտրոնային գրատախտակներով եւ համայնքով:*

## 7,5 ԲԱԼԸ ԴՐԱԿԱՆ՝ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ



*Հայաստանի կրթության եւ գիտության նախարարին հատկապես վերջին շրջանում հաճախ են հարցեր ուղղում ընդունելության քննությունների շեմային բալի մասին: Հարցերից «խուսափելու» համար Հայաստանի ԿԳ նախարարն իր ֆեյսբուքյան էջում անդրադարձել է այդ հարցին:*

«Հարգելի դիմորդներ, ծնողներ եւ լրագրողներ: Տեղեկացնեմ ձեզ, որ, Հայաստանի կառավարության կողմից հաստատված կարգի համաձայն, դրական է համարվում 7.5 բալը եւ ավելին:

Դրանից ցածր միավորներ ստացած դիմորդներն այդ առարկայից համարվում են կտրված, սակայն կարող են շարունակել հանձնել մյուս առարկաները: Վերահանձնումները արգելված են: Առկա համակարգով քննություններն անհաջող հանձնած դիմորդները կարող են հետագայում իրենց ուժերը փորձել հեռակա համակարգում այն մասնագիտություններով, որոնցով թույլատրված է հեռակա ուսուցումը»,- նշել է նախարարը:

## ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԺՈՂՈՎ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ



*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, հունիսի 6-ին տեղի է ունեցել Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսների եւ հայաստանյան թեմերի առաջնորդների հերթական ժողովը: Ժողովում քննարկվել են եկեղեցու հոգեւոր-կրթական, քարոզչական առաքելությանը վերաբերող կանոնական, ծիսական եւ սոցիալական բնույթի հարցեր:*

Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների գործունեության եւ 2014-2015 ուս. տարվա ընդունելության գործընթացի վերաբերյալ զեկույց է ներկայացրել Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը:

Համաձայն Սրբազանի զեկուցման, Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատություններում ներկայումս ուսանում են 236 սաներ: Վեհափառ Հայրապետի կողմից թելադրություն է արվել թեմակալ առաջնորդներին՝ համայնքներում հոգեւոր հովիվների միջոցով քաջալերելու երիտասարդներին, որպեսզի դիմեն Հոգեւոր ճեմարան: Հոգեւոր-կրթական հաստատություններին հանձնարարվել է նաեւ լայն քարոզչություն իրականացնել հաստատությունների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

Արհեստական վիժեցման խնդրի մասին զեկույցով է հանդես եկել Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը: Զեկույցում անդրադարձ է կատարվել Հայաստանում ժողովրդագրական հիմնախնդիրներին, ծնելիության աճի նվազմանը, ամուսնալուծությունների թվաքանակի մեծացման եւ այդ համատեքստում արհեստական ու սեռով պայմանավորված վիժեցման խնդիրներին:

Հանձնարարական է տրվել Հայեցակարգային գրասենյակին ձեռնամուխ լինելու Սուրբ Պսակի խորհրդի եւ ժողովին արծարծված նյութերի վերաբերյալ եկեղեցու հայեցակարգային մոտեցումների հստակեցմանը:

## ՃԱՊՈՆԱԿԱՆ ՈՉ ՏՐԱԳՐԱՅԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում Հայաստանի եւ Ճապոնիայի կառավարությունների միջեւ հունիսի 9-ին կնքվել է Ճապոնիայի կողմից Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարությանը դրամաշնորհ տրամադրելու մասին համաձայնագիր, ըստ որի հայկական կողմին կտրամադրվի 200 մլն յենին (1,93 մլն ԱՄՆ դոլարին) համարժեք՝ Ճապոնիայի փոքր եւ միջին ձեռնարկությունների արտադրանք: Համաձայնագիրը ստորագրել են Հայաստանի արտակարգ իրավիճակների փոխնախարար Հայկարամ Մխիթարյանը եւ Հայաստանում Ճապոնիայի դեսպան Տիկահիտո Հարադան:*

## ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԾԱՎԱԼԸ ՆՎԱԶԵԼ Է

*Այս տարվա հունվար-ապրիլին Հայաստանում առեւտրի շրջանառությունը կազմել է 627 մլրդ 9 մլն դրամ եւ 2013թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 5,1 տոկոսով:*

*Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, մանրածախ առեւտրի ծավալն ավելացել է 2,2 տոկոսով, մեծածախ առեւտրինը՝ 12 տոկոսով, իսկ ավտոմեքենաների առեւտրինը (ներառում է ինչպես մասնագիտացված առեւտրի կետերի միջոցով իրականացված ավտոմեքենաների, դրանց մասերի եւ պարագաների վաճառքը, այնպես էլ դրանց տեխնիկական սպասարկումը եւ նորոգումը) նվազել է 5,1 տոկոսով:*

## «ՄԻԱՍԻՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Հունիսի 12-ին Հայաստանում մեկնարկեց եվրոպական հանձնաժողովի «Երիտասարդությունը շարժման մեջ» («Youth in Action») ծրագրի կողմից ֆինանսավորված մեկ այլ հետաքրքիր դասընթաց՝ «Միասին հանուն կայուն ապագայի» խորագրով: Ինչպես տեղեկացրին դասընթացի կազմակերպիչ «Կրթական եւ մշակութային կամուրջներ» հասարակական կազմակերպությունից, այն կտեւի մինչեւ հունիսի 19-ը:*

Դասընթացին կմասնակցեն 8 երկրների 30 ներկայացուցիչներ: Հայաստանի, Ֆրանսիայի, Վրաստանի, Լիտվայի, Ռումինիայի, Պորտուգալիայի եւ Ուկրաինայի ներկայացուցիչները կհամախմբվեն Հայաստանում: Դասընթացի հիմնական 6 աշխատանքային օրերը նվիրված կլինեն առողջ ապրելակերպին եւ սոցիալական ինտեգրմանը: Ծրագրի նպատակն է զարգացնել եւ խրախուսել տարբեր երկրների երիտասարդների քննադատական, ժողովրդավարական եւ ստեղծագործական մասնակցությունը:

Ծրագրի ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան ձեռք բերել հիմնարար գիտելիքներ սոցիալական ինտեգրման, միջմշակութային հաղորդակցման, առողջ ապրելակերպի վերաբերյալ: Մի շարք հետաքրքիր քննարկումներ կկազմակերպվեն թեմայի հիմնական սկզբունքների եւ գաղափարների վերաբերյալ:

Դասընթացը կազմակերպվել է «Կրթական եւ մշակութային կամուրջներ» ՀԿ-ի եւ իր արտասահմանյան գործընկերների կողմից՝ երիտասարդական ակումբների դաշնություն հասարակական կազմակերպության աջակցությամբ: